



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

6 դեկտեմբերի 2012 թվականի N 1568 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇՏՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ՝ ՌԻՍԿԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԻՍԿԱՅ-ՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՈՇՈՂ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2.1-ին հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի էներգետիկայի պետական տեսչության կողմից իրականացվող՝ ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏ

Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

2012 թ. դեկտեմբերի 18  
Երևան



Ը Ն Դ Հ Ա Ն ՈՒ Ր Ն Կ Ա Ր Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇՏՈՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ՝ ՌԻՍԿԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԻՍԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՈՇՈՂ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն ակտով կանոնակարգվում են Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի էներգետիկայի պետական տեսչության (այսուհետ՝ ԷՊՏ) կողմից՝ ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգի (այսուհետ՝ ռիսկի համակարգ) կիրառման, ինչպես նաև ռիսկայնությունը որոշող չափանիշների հետ կապված ընդհանուր հարաբերությունները:

2. Ռիսկի համակարգի նպատակն է՝

1) վերանայել, վերլուծել և դասակարգել վերահսկման օբյեկտները՝ ըստ դրանց ռիսկայնության գործոնների.

2) ձևավորել տվյալների բազա՝ ըստ էլեկտրական ենթակայանների բաշխիչ սարքերի, էլեկտրահաղորդման օղային գծերի, գազափոխադրման, գազաբաշխման և գազասպառման էներգատեղակայանքների, տնտեսավարող սուբյեկտի՝ դրա մասնաճյուղերի, որը թույլ կտա դասակարգել վերահսկման ենթակա օբյեկտները՝ ըստ ռիսկայնության.

3) ձևավորել պատահարների (վթարների և խախտումների) վիճակագրական բազա, որը հնարավորություն կտա հզորացնելու ԷՊՏ-ի վերլուծական կարողությունները.

4) բարձրացնել առկա տեսչական ռեսուրսների բաշխման արդյունավետությունը, դրանք կենտրոնացնելով վերահսկման ենթակա առավել ռիսկային օբյեկտների վրա:

ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

II. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ  
ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3. Մեթոդաբանությունում կիրառվող հիմնական հասկացություններն են՝

1) *ռիսկ*՝ վերահսկման օբյեկտում պատահարներ տեղի ունենալու հավանականության և դրանցից ակնկալվող բացասական հետևանքների արտադրյալ.

2) *ռիսկի վերլուծություն*՝ ԷՊՏ-ի տրամադրության տակ առկա տեղեկատվության պարբերական վերլուծություն, որն իրականացվում է պատահարների առաջացման պայմանների ու պատճառների բացահայտման, դրանց նույնականացման և վերջիններից ակնկալվող բացասական հետևանքների գնահատման համար.

3) *ռիսկի գնահատում*՝ կոնկրետ իրավիճակի և ճանաչված վտանգի հետ կապված ռիսկի քանակական և որակական արժեքի որոշում.

4) *ռիսկի աստիճան*՝ ռիսկի որակական և քանակական գնահատման արդյունք, այսինքն, ռիսկի հավանական հետևանքների արտահայտում, այդ թվում՝ թվային.

5) *ռիսկային խումբ*՝ ռիսկի միավորների միջակայք, որում ընդգրկված վերահսկման ենթակա օբյեկտները ենթակա են ստուգման ըստ հստակ սահմանված հաճախականության.

6) *բազային գիծ*՝ ռիսկայնության միավոր, որից ցածր և բարձր միավոր հավաքած վերահսկման ենթակա օբյեկտները պատկանում են տարբեր ռիսկի խմբերի:

III. ՌԻՍԿԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

4. Ռիսկի համակարգը ենթադրում է ԷՊՏ-ի կողմից վերահսկման ենթակա բոլոր օբյեկտների ռիսկայնության գնահատում և դրանց վերահսկողության հաճախականության բաշխում՝ ըստ տվյալ օբյեկտների ռիսկայնության աստիճանի:

5. ԷՊՏ-ի կողմից վերահսկման ենթակա օբյեկտների ռիսկայնությունը հաշվարկվում է անհատական ռիսկայնության տեղեկատվական և վերահսկողական բնույթի հարցերից ստացված գնահատականների հիման վրա:

6. Ռիսկի համակարգի միջոցով ռիսկերը գնահատվում են հետևյալ քայլերի հաջորդականությամբ՝

**քայլ 1.** վերահսկման ենթակա օբյեկտների հաշվառում և դրանց տարանջատում 5 տարբեր խմբերի՝ էլեկտրական ենթակայանների և բաշխիչ սարքերի, էլեկտրահաղորդման օդային գծերի, գազափոխադրման էներգատեղակայանքների, գազաբաշխման և գազասպառման էներգատեղակայանքների, տնտեսավարող սուբյեկտի՝ դրա մասնաճյուղերի,

**քայլ 2.** ստուգման արդյունքում ստուգաթերթերի ամփոփում և դրա հիման վրա օբյեկտների անհատական ռիսկայնության որոշում,

**քայլ 3.** ռիսկայնության միավորի որոշման արդյունքների հիման վրա՝ ստուգման ենթակա օբյեկտների դասակարգում՝ ըստ ռիսկայնության խմբերի:

7. Քայլ 2-ը և քայլ 3-ը կրում են պարբերական բնույթ, մինչդեռ քայլ 1-ը իրականացվում է մեկ անգամ՝ մեթոդաբանության ներդրման փուլում:

#### IV. ՌԻՍԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՐԿՈՒՄԸ

8. ԷՊՏ-ի կողմից վերահսկման ենթակա օբյեկտների ռիսկայնությունը հաշվարկվում է ստուգաթերթերից ստուգումների արդյունքում ստացված գնահատականների հիման վրա: Ստուգաթերթի հարցաշարում ընդգրկված տեղեկատվական բնույթի յուրաքանչյուր հարցի պատասխան ենթադրում է հստակ ռիսկայնության բալ, իսկ վերահսկողական բնույթ կրող հարցերն ունեն նաև ռիսկայնության կշիռներ, որոնք, հարցում ամրագրված պահանջը խախտելու դեպքում, հաշվի են առնվում:

9. Ռիսկի միավորը վերահսկման ենթակա օբյեկտի համար հաշվարկվում է հետևյալ բանաձևի միջոցով՝

$$(0,3 \frac{m_1}{n} + 0,7 \frac{m_2}{n}) * 100\% ,$$

որտեղ՝

1) n-ը տեղեկատվական բնույթի հարցերի պատասխաններից ստացված բալերի գումարի առավելագույն հնարավոր արժեքն է.

2) m-ը վերահսկողական բնույթի հարցերի պատասխաններից ստացված կշիռների գումարի առավելագույն հնարավոր արժեքն է.

3)  $m_1$ -ը տեղեկատվական բնույթի հարցերի պատասխաններից ստացված բալերի գումարի արժեքն է.

4)  $m_2$ -ը վերահսկողական բնույթի հարցերի պատասխաններից ստացված կշիռների գումարի արժեքն է:

10. Տեղեկատվական և վերահսկողական բնույթի հարցերից ստացվող միավորների հարաբերակցությունը միմյանց նկատմամբ պետք է լինի 3:7, իսկ վերջնական միավորը՝ մասնաճյուղերի դեպքում, նաև պետք է բազմապատկվի 0,9 գործակցով: Միավորների հարաբերակցության և գործակցի նշված մեծությունները որոշվել են փորձագիտական գնահատման հիման վրա:

## V. ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

11. Ըստ ռիսկային միավորների նվազման հաջորդականության՝ վերահսկման ենթակա օբյեկտները դասակարգվում են բարձր, միջին և ցածր խմբերի, ընդ որում, բարձր ռիսկայնության խմբում ընդգրկվում են առավելագույն ռիսկայնության միավոր

ստացած վերահսկման ենթակա օբյեկտների 20 տոկոսը, և ըստ ռիսկայնության միավորի նվազման՝ միջինում՝ 50 տոկոսը, իսկ ցածրում՝ 30 տոկոսը:

Ռիսկայնության խումբը	Ռիսկայնության միավորը (%)
Բարձր	80 և ավելի
Միջին	30 - 80
Ցածր	մինչև 30

12. Մինչև առաջին ստուգումը՝ բոլոր վերահսկման ենթակա օբյեկտների ռիսկայնությունը համարվում է մաքսիմալ, ինչը թույլ է տալիս ստուգումների պլանավորման նախնական փուլում թիրախավորել այն օբյեկտները, որոնք ստուգման չեն ենթարկվել համակարգի ներդրումից հետո:

#### VI. ՌԻՍԿԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԲԱԶԱՆ

13. Ռիսկի համակարգի պատշաճ աշխատանքներն ապահովելու նպատակով հարկավոր է մշակել ԷՊՏ-ի վերահսկման ենթակա օբյեկտների տվյալների բազա, որում կնշվեն տվյալ օբյեկտի անվանումը, գտնվելու վայրը, անվանական հարաչափերը, ռիսկի միավորն ու օբյեկտը բնութագրող և ԷՊՏ-ին անհրաժեշտ այլ տվյալներ (ինչպես էներգատեղակայանքներում տեղի ունեցած պատահարների մասին և այլն): Տվյալների բազան ժամանակի ընթացքում կստանա ավելի ամբողջական և բնութագրող տեսք:

#### VII. ՌԻՍԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՈՇՈՂ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

14. Ռիսկայնությունը որոշող չափանիշները՝ ըստ ստուգվող օբյեկտների, նշված են աղյուսակներում: Հարցերի պատասխանները գնահատված են բալերով:

ԵՆԹԱԿԱՅԱՆԻ (ԵԿ) ԵՎ ԲԱՇԽԻՉ ՍԱՐԲՎԱԾՔԻ (ԲՍ) ՀԱՄԱՐ

Տեղեկատվական բնույթի հարցեր						
հարցը	պատասխանը					գնահատման բալլը
	բալերը					
	1	3	5	7	9	
ԵԿ-ի շահագործման տարին	մինչև 5	5 և ավելի մինչև 10	10 և ավելի մինչև 15	15 և ավելի մինչև 20	20 և ավելի	(բալ x 0.6)
Վերակառուցում, հիմնանորոգում (տարի)	մինչև 3	3 և ավելի մինչև 5	5 և ավելի մինչև 10	10 և ավելի մինչև 15	15 և ավելի	(բալ x 0.6)
Նախորդ ստուգումից հետո ընկած ժամանակահատվածում (բայց ոչ ավելի, քան 3 տարին) վթարայնության գնահատում	տարեկան 1-ին աստիճանի մինչև 3 խախտում	տարեկան 1-ին աստիճանի 4-6 խախտում	տարեկան 1-ին աստիճանի 7-10 խախտում	մարդու կյանքին վնասի պատճառմամբ վթար, տարեկան 1-ին աստիճանի մինչև 10 խախտում	համակարգային, մարդու կյանքին վնասի պատճառմամբ վթար, տարեկան 11 և ավելի 1-ին աստիճանի խախտումներ	(բալ x 1)
Տեղակայված պահուստային ուժային տրանսֆորմատորը	առկա է՝ հանված է գործողությունից՝ 1 օրով	Եղել է, ապահավաքակցված է և գտնվում է նորոգման մեջ՝ մինչև 3 ամիս ժամկետով:	Եղել է, ապահավաքակցված է և գտնվում է նորոգման մեջ՝ մինչև 6 ամիս ժամկետով:	Առկա է և չի գործում (վթարված է):	Բացակայում է:	(բալ x 0.6)
Գերլարումներից պաշտպանության սարքերը	Առկա են՝ գործուն վիճակում, մեկուսիչների մասնակի կտրվածքներով:	Առկա են՝ մասնակի գործուն վիճակում, վերջին մեկ տարում մինչև 3 անգամ գործելուց հրաժարում:	Առկա են՝ մասնակի գործուն վիճակում, վերջին մեկ տարում 3-ից ավելի անգամ գործելուց հրաժարում:	Առկա են և չեն գործում (վթարված են):	Բացակայում են:	(բալ x 1)
Ռելեական պաշտպանության և ավտոմատիկայի (ՌՊԱ) սարքվածքները	Առկա են՝ ըստ նախագծի բոլոր ՌՊԱ սարքվածքները, 1-ը ժամանակավոր՝ մինչև 3 ժ, հանված է գործողությունից:	Առկա ՌՊԱ սարքվածքներից 1-ը ժամանակավոր՝ մինչև 24 ժ, հանված է գործողությունից:	Առկա ՌՊԱ սարքվածքներից 2-ը ժամանակավոր՝ մինչև 24 ժ, հանված են գործողությունից:	Առկա է գործողությունից անժամկետ հանված ՌՊԱ 1 սարքվածք:	Առկա և գործողությունից անժամկետ հանված են ՌՊԱ 1-ից ավելի սարքվածքներ:	(բալ x 1)
Ընդամենը						

ԷԼԵԿՏՐԱՀԱՂՈՐԴՄԱՆ ՕԴԱՅԻՆ ԳԾԻ (ՕԳ) ՀԱՄԱՐ

Տեղեկատվական քննյթի հարցեր						
հարցը	պատասխանը					գնահատման քալը
	բալերը					
	1	3	5	7	9	
Շահագործման տարին	մինչև 5	5 և ավելի մինչև 10	10 և ավելի մինչև 15	15 և ավելի մինչև 20	20 և ավելի	(բալ x 0.4)
ՕԳ-ի երկարությունը (կմ)	մինչև 20	20 և ավելի մինչև 110	110 և ավելի մինչև 150	150 և ավելի մինչև 220	220 և ավելի	(բալ x 0.4)
Վերակառուցում, հիմնանորոգում	մինչև 3	3 և ավելի մինչև 5	5 և ավելի մինչև 10	10 և ավելի մինչև 15	15 և ավելի	(բալ x 0.4)
Նախորդ ստուգումից հետո ընկած ժամանակահատվածում (բայց ոչ ավելի, քան 3 տարին) վթարայնության գնահատում	տարեկան 1-ին աստիճանի մինչև 3 խախտում	տարեկան 1-ին աստիճանի 4-6 խախտում	տարեկան 1-ին աստիճանի 7-10 խախտում	մարդու կյանքին վնասի պատճառմամբ վթար, տարեկան 1-ին աստիճանի մինչև 10 խախտում	համակարգային, մարդու կյանքին վնասի պատճառմամբ վթար, տարեկան 10 և ավելի 1-ին աստիճանի խախտումներ	(բալ x 1)
Ընդամենը						

ԳԱԶԱՓՈՆԱԴՐՄԱՆ ԷՆԵՐԳԱՏԵՂԱԿԱՅԱՆՔԻ ՀԱՄԱՐ

Տեղեկատվական քննյթի հարցեր						
հարցը	պատասխանը					գնահատման քալը
	բալերը					
	1	3	5	7	9	
Կառուցման տարին	մինչև 10	10 և ավելի մինչև 20	20 և ավելի մինչև 30	30 և ավելի մինչև 40	40 և ավելի	(բալ x 0.6)
Գազատարի երկարությունը (կմ)	մինչև 10	10 և ավելի մինչև 30	30 և ավելի մինչև 60	60 և ավելի մինչև 100	100 և ավելի	(բալ x 0.4)
Գազատարի վրա առկա կառույցների՝ գազաբաշխիչ կայանների (ԳԲԿ), ճնշման ինքնաշխատ համակարգերի (ՃԻՀ) քանակը (հատ)	մինչև 2	3-4	5-8	9-12	13 և ավելի	(բալ x 0.6)
Միջին տարեկան վթարայնության գնահատում՝ վերջին ստուգումից հետո, բայց ոչ ավելի, քան 3 տարվա կտրվածքով (վթարներ)	մարդկանց կյանքին վնասի պատճառմամբ (առանց մահացու ելքի) մինչև 4 վթար	մարդկանց կյանքին վնասի պատճառմամբ (առանց մահացու ելքի) 5 և ավելի վթարներ	մարդկանց կյանքին վնասի պատճառմամբ (մահացու ելքով) վթար	մարդկանց կյանքին վնասի պատճառմամբ (մահացու ելքով) 2-4 վթար	մարդկանց կյանքին վնասի պատճառմամբ (մահացու ելքով) 5 և ավելի կամ խմբակային մահացու ելքով վթարներ	(բալ x 1)
	տեղամասային մինչև 10 վթար	տարածքային մինչև 10 կամ տեղամասային 11 և ավելի վթարներ	համակարգային 1 կամ տարածքային 11 և ավելի վթարներ	համակարգային 2-4 վթար	համակարգային 5 և ավելի վթարներ	(բալ x 0.8)
Ընդամենը						



## ԳԱԶԱԲԱՇԽՄԱՆ ԵՎ ԳԱԶԱՍՊԱՌՄԱՆ ԷՆԵՐԳԱՏԵՂԱԿԱՅԱՆՔԻ ՀԱՄԱՐ

Տեղեկատվական բնույթի հարցեր						
հարցը	պատասխանը					գնահատման բալլը
	բալլերը					
	1	3	5	7	9	
Կառուցման տարին	մինչև 6	6 և ավելի մինչև 12	12 և ավելի մինչև 18	18 և ավելի մինչև 25	25 և ավելի	(բալլ x 0.6)
Վերականգնման (վերակառուցման) տարին	մինչև 3	3 և ավելի մինչև 7	7 և ավելի մինչև 11	11 և ավելի մինչև 15	15 և ավելի	(բալլ x 0.4)
Տեխնիկական վիճակի գնահատման և հիմնանորոգման տարին	մինչև 2	2 և ավելի մինչև 3	3 և ավելի մինչև 4	4 և ավելի մինչև 5	5 և ավելի	(բալլ x 0.6)
Վթարայնության գնահատում՝ վերջին 1 տարվա կտրվածքով (1-ին և 2-րդ աստիճանների խախտումներ՝ գազատարի 100 կմ երկարության հաշվով)	2-րդ աստիճանի մինչև 10 խախտում	2-րդ աստիճանի 11 և ավելի խախտումներ	1-ին աստիճանի մինչև 10 խախտում կամ տեղամասային մինչև 5 վթար	1-ին աստիճանի 11 և ավելի խախտումներ կամ տեղամասային 6-10 վթար	տեղամասային 11 և ավելի խախտումներ կամ տարածքային վթար	(բալլ x 0.8)
Գազատարի ստորգետնյա մասի տեխնիկական վիճակը՝ ըստ վերջին հետազոտման արդյունքների	20 նիշ (բալլ) և ավելի	16-20	13-16	10-13	10 և պակաս	(բալլ x 1)
Ընդամենը						

ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏԻ՝ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՀԱՄԱՐ

հարցը	Տեղեկատվական բնույթի հարցեր			գնահատման բայլը	չի պահանջվում (✓)
	պատասխանը				
	բայլերը				
	5	7	9		
Շահագործվող էլեկտրատեղակայանքների ընդհանուր թիվը՝ ենթակայաններ, բաշխիչ, փոխանցատիչ կետեր/ էլեկտրահաղորդման օդային և մալուխային գծեր (հատ/կմ)	մինչև 500 / 800	501-ից մինչև 1500 / 801-ից մինչև 5000	1501 / 5001-ից ավելի	(բայլ x 0.6)	
Շահագործվող էներգատեղակայանքների ընդհանուր թիվը՝ գազակարգավորիչ կետեր (ԳԿԿ), պահարանային գազակարգավորիչ կետեր (ՊԳԿԿ), անհատական ճնշման կարգավորիչ սարքեր (ԱՃԿՍ)/գազատարներ (հատ/կմ)	մինչև 300 / 150	301-ից մինչև 1000/ 151-ից մինչև 400	1001/401-ից ավելի	(բայլ x 0.6)	
Վթարայնության գնահատում՝ վերջին 1 տարվա կտրվածքով (վթարներ՝ 100 հազ. բաժանորդի հաշվով)	մարդու կյանքին վնասի պատճառմամբ (ոչ մահացու էլքով)՝ մինչև 4 վթար	մարդու կյանքին վնասի պատճառմամբ ոչ մահացու էլքով՝ 5 և ավելի կամ մահացու էլքով՝ մինչև 4 վթար	մարդու կյանքին վնասի պատճառմամբ՝ մահացու էլքով՝ 5 և ավելի կամ խմբակային վթար	(բայլ x 1)	
Նախորդ ստուգումից հետո ընկած ժամանակահատվածում (բայց ոչ ավելի, քան 3 տարին) մասնաճյուղի (Մ) կողմից գործարկված 6 կՎ և բարձր լարման էլեկտրատեղակայանքների (նոր կառուցված և վերակառուցված) թիվը	մինչև 50	51 և ավելի մինչև 150	151 և ավելի	(բայլ x 0.4)	
Նախորդ ստուգումից հետո ընկած ժամանակահատվածում (բայց ոչ ավելի, քան 3 տարին) Մ-ի կողմից գործարկված միջին և բարձր ճնշման էներգատեղակայանքների (գազի համակարգի նոր կառուցված և վերակառուցված) թիվը	մինչև 50	51 և ավելի մինչև 200	201 և ավելի	(բայլ x 0.4)	
Նախորդ ստուգումից հետո ընկած ժամանակահատվածում (բայց ոչ ավելի, քան 3 տարին) Մ-ի կողմից՝					
մինչև լիազոր մարմնից գործարկման եզրակացություն ստանալը՝ էներգատեղակայանքը չգործարկելու պահանջի խախտումներ	տարեկան մինչև 5 խախտում	տարեկան 6-15 խախտում	տարեկան 16 և ավելի խախտումներ	(բայլ x 0.8)	
պատահարի դեպքում, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, լիազոր մարմնին հայտնելու պահանջի խախտումներ	տարեկան մինչև 3 խախտում	տարեկան 4-10 խախտում	տարեկան 11 և ավելի խախտումներ	(բայլ x 0.6)	
<b>Ընդամենը</b>					

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ

Դ. ՍԱՐԳՍՅԱՆ